

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«10» հունվար 2020թ.

No 33 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԹԻՎ 2428-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի
հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ
կետի 20-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016 թվականի
օգոստոսի 2-ի «Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և
սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից
արտակարգ իրավիճակների, Հայաստանի Հանրապետության կամ Լեռնային
Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից
իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների, ինչպես նաև
հանրային ներգրավում ունեցող իրադարձությունների արդյունքում տուժած
(ներառյալ՝ մահացած) անձանց վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու
մասին» թիվ 2428-Ա հրամանը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն
հավելվածի:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

ՀՀ առողջապահության նախարարի
2020 թվականի հունվարի 10-ի թիվ 33 - Ա հրամանի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՄ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՏԵՂԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ (ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ) ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՏՈՒԺԱԾ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՄԱՀԱՑԱԾ) ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

- 1) պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների, Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների, ինչպես նաև հանրային ներգրավում ունեցող այլ իրադարձությունների, տեղային նշանակության դեպքերի (պատահարների) արդյունքում տուժած (ներառյալ՝ մահացած) անձանց վերաբերյալ ներկայացվող տեղեկության ձևաչափը՝ համաձայն Հավելված N 1-ի,
- 2) արտակարգ դեպքերի (պատահարների), իրադարձությունների ազդարարման ուրվագիծը՝ համաձայն Հավելված N 2-ի,

3) տեղային նշանակության դեպքերի (պատահարների) ցանկը՝ համաձայն Հավելված N 3-ի:

2. Սահմանել, որ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների, Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների, ինչպես նաև հանրային ներգրավում ունեցող այլ իրադարձությունների, տեղային նշանակության դեպքերի (պատահարների) արդյունքում տուժած (ներառյալ մահացած) անձանց վերաբերյալ տեղեկությունը բժշկական կազմակերպություն դիմելուց կամ տեղափոխելուց հետո **մեկ ժամվա** ընթացքում և դրանից հետո տուժածի առողջական վիճակի փոփոխության դեպքում **անհապաղ** ներկայացվում է ՀՀ առողջապահության նախարարության «**Թեժ գիծ**» ծառայություն 8003 կարճ հեռախոսահամարով կամ hotline@moh.am էլեկտրոնային հասցեով համաձայն հավելված N 1-ի: Սույն հրամանի իմաստով «**արտակարգ իրավիճակներ**» հասկացությունը նույնական է 1998 թվականի դեկտեմբերի 2-ի «**Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին**» թիվ **ՀՕ-265 Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված հասկացության հետ:**

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Թեժ գիծ» ծառայության պատասխանատուին՝

հրամանի 2-րդ կետով նշված տեղեկությունը ստանալուց հետո **անմիջապես (օրվա ցանկացած ժամի)**՝ հաղորդել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարին՝ համաձայն հավելված N 2-ի:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝

լինել պատրաստ գործելու՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի համապատասխան հանձնարարականի և ստեղծված իրավիճակի:

5. Սույն հրամանի 2-րդ կետով սահմանված պահանջի կատարման նպատակով բժշկական կազմակերպության գործադիր մարմնի կամ անհատ ձեռնարկատիրոջ համապատասխան իրավական ակտով նշանակվում է պատասխանատու անձ/անձինք, որոնց տվյալները (անուն, ազգանուն, հեռախոսահամար, պաշտոն, էլ. հասցե) սույն հրամանի վերաբերյալ ծանուցումից հետո **3-օրյա ժամկետում**, իսկ պատասխանատու անձի/անձանց փոփոխության դեպքում **1-օրյա ժամկետում** գրավոր ներկայացվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

6. Սահմանել, որ սույն հրամանի պահանջների խախտումը առաջացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և համապատասխան իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ միջև կնքված պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված պատասխանատվություն՝ հիմք ընդունելով կնքված պայմանագիրը:

7. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զարուհի Դարբինյանին՝


ապահովել հրամանի առաքումը Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան՝ համապատասխանաբար մարզպետարանների և քաղաքապետարանի ենթակայության պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններին ծանուցելու նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Հայաստանի Հանրապետության այլ գերատեսչությունների ենթակայության և մասնավոր բժշկական կազմակերպություններ, որոնք

իրականացնում են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում:

8. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարին:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ՈՒՐՎԱԳԻԾ
ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԻ (ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ), ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ



ՑԱՆԿԸ
ՏԵՂԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ (ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ)

Հ/հ	Անվանում	Տուժածների թիվը*
1.	Պատահարներ՝	
1)	տրանսպորտային վթարներ	3 և ավելի
2)	բնակելի, հասարակական, արտադրական շենքերում և շինություններում, կրթական հաստատություններում, մարզական, մշակութային այլ օբյեկտներում, հասարակական և այլ տարածքներում վթարներ, պայթյուններ, հրդեհ, փլուզում և այլն	3 և ավելի
2.	Մինչև 18 տարեկան երեխաների և հղի կանանց դժբախտ պատահարներ և բռնության դեպքեր՝ ներառյալ մահվան ելքով	1 և ավելի
3.	Հասարակական վայրերում անկարգություններ	3 և ավելի
4.	Օձի, թունավոր միջատների խայթոցներ	1 և ավելի
5.	Այլ	3 և ավելի

* նույն ձևաչափով հայտնել նաև արձանագրված յուրաքանչյուր մահվան դեպք